

ցուցնել այս նոր գտնուած զարմանալի հնութիւնն ալ, որուն նմանը ինչուան հիմայ չէ եղած, և որ հնախօսաց առջին անգին գանձմը կրնայ սեւտուիլ. ինչու որ ալ տակէց վերջը որոշ կերպով կրնան խմանալ թէ հիները ինչ կերպով նաւը կը շինէին :

Այս փոռաւոր հնութիւնը Օսմանեան պետութեան թոյլտուութեամբը Լնդոնի ալիսի տարուի 1 ընտանի թագաւորական թանգարանին նոր զարդ մը աւելցնելու :

ՏԵՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Հասկիւն յախուի երկու ասիւն Բարձր պահելու հարց :

Երբ կ'ազգես որ հաւկիթը երկար տառէն թարմ մնայ, մոխիրը մազէ անցուր և մէկ տակաւի մը մէջ, կամ ասփորի և կամ ուրիշ ամանի մը մէջ հաւկիթները նոյն մոխրոյն մէջ թաղէ. և նորէն նոր ածած հաւկիթները հետ զհետէ շարէ նոյն ամանին մէջ, անանկ որ նոր գրած հաւկիթներն ալ միշտ մոխրով ծածկուին : Երբ հաւկիթ ածելու ժամանակը կ'անցնի, նոյն հաւկիթները ուրիշ ամանի մը մէջ փոխադրէ նոյնպէս մոխրով ծածկելով, վերջի ածածները ամանին տակը շարէ այնպէս կարգաւ որ հին ածածները ամանին երեսը գան որ զանոնք նախ գործածես :

Հասկիւն յախուի երկու ասիւն Բարձր պահելու հարց :

ԹԱՐԾ հաւկիթները ձէլով օժէ, անանկ որ հաւկիթներուն երեսները բոլորովին ձէլով օտին, ու այնպէս կանգուն կեցնելով կողով մը մէջ գիշէ : Զէլը հաւկիթին կեղևին ծակալէքը գոցելով հաւկիթին մէջի մասունքը չեն այլայլիր, և ասանկով հաւկիթները խիստ երկար տառէն թարմ կը մնան :

Հասկիւն իրով ասիւն Բարձր պահելու հարց :

ՊԵՏԳ Է ունենալ պղտի ամաններ, անանկ որ տմէն մէկը մէջը առնէ քառասուն կամ վաթսուս հաւկիթ. և չի մարած կրոյն վրայ քիչ քիչ ջուր լեցնելով կը մարես. որուն չափն է մէկ օխտ կրոյն տասը օխտ ջուր. և աղէկ մը խառնելէն վերջը քանի մը ժամ կը թողուս որ կիրը տակն իջնայ, ու երեսի ջուրը կ'առնես ետքը ամանին մէջ թարմ հաւկիթները շարէ ու վրան այս ջուրէն լեցուր և մնացած ջուրը պահէ որ պէտք եղած տառէն գործածես. և հետագէտէն որչափ որ նոր ածած հաւկիթ մէջը կը գնես, աս ջրէն ալ վրան լեցուր, և անանկ որ երկու իրէք մաս հաւկիթները ջրոյն մէջ ծածկուած պիտի մնան. և այս ամանները մէկ զով տեղ մը շարէ բերանին դոյ, որ գրոյ օղը շատ մէջը չանցնի : Ասանկով առջի տարուան հաւկիթը ինչուան երկրորդ տարին թարմ կը մնայ :

Ա Ռ Ա Վ

Ամառուան անգիւր :

ԱՄԱՌՈՒՄԱՆ տաք օրերուն էր
Գետինը չոր ցամքած կերէր .
Յանկարծ իրէք ամպիկ ելան
Երկրիս վերայ տարածուեցան .
Զարկաւ արևը հեռուէն,
Ոսկի ծագեց ամպոց միջէն .
Տեսաւ երկիրս ու կը կանչէր
Որ ծարաւուն գեղ մը գըմներ :

Լքեց արևն ու գըլծացաւ
Եւ ամպերուն դարձած ըսաւ .
,, Ըհա՛ ձեզի կը բերեմ հիւթ
,, Որ անձրեկէ գետիններուդ ,, :

Հովին թեով ամպերն ելան
Ու առ գիւս ան գին քաշուեցան .
Բայց մէկն անհոգ երկրիս հողուն
Ելաւ պատեց վերեւ ծովուն,
Ու հոն թափեց ջուրը ծոցէն
Զըրկեց զերկիրն ըմպելիքէն :

Մէկալն ուռած արկաւած կերթար,
Որոտունքէն աշխարհք գողար,
Կայծակներով փայլակներով
Լնձրեկ տեղ լեցուց ձայնով .
Փռա՛ տեղ մըշակն ու այգեպան
Կը սպասէին որ ջուր տեսնան .
Ինչուան որ հով մ'եկաւ սաստիկ
Պառուեց ցըրուեց զամպն ագահիկ :

Իսկ երրորդ ամպն գըլծասիրտ
Ինչ որ ունէր թափեց յերկիր .
Դաշտ ու պարտեզ ոռոգուեցան,
Հովիւ, մըշակն ու այգեպան
Օրհնեցին զինքը մէկ բերան :

Արեւն ալ նոր հիւթեր ծովէն
Հանեց բերաւ տըւաւ իրեն,
Հաւատարիմ ամպն ալ նոյնպէս
Գնաց ոռոգեց հազար պարտեզ .
Դաշտն ու հովիւս արան ու այգին
Զըւորթացան նոր կեանք առին :

Դարձաւ արևն ալ այն տառն
Ու հաճութեամբ ըսաւ իրեն .
,, Դու ես միայն բարեկամ իմ
,, Ու պաշտօնեայ հաւատարիմ,
,, Որ քեզ յանձնած շնորհքս դիտցար
,, Սփռել երկրիս առատաբար .
,, Լսիկ ետեւ ես ալ ըզբեզ
,, Փառաւորել տամ ինձի պէս ,, :

Այս ըսելով անանկ փայլուն
Լոյս մը ծագեց աղնիւ ամպուն,
Որ արևուն գէմ նոր արև
Կը շողողար երկնից վերեւ :

Գոհ կ'ընէ զմարդ սիրտ գըլծառատ,
Եւ ոչ չըռայլն կամ ժըլատ :

ՓԷՌԷԿՈՅ